ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-2-Ե-145

«14» հունվարի 2026թ.

«ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Ձորաղբյուր 2224 Ջրվեժ Այգեփարածք 4/115)

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Վ. ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 21)

Հարգելի՝ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար հեռուստացույցների, ջերմային տպիչների, համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

«ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ

- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չէ 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես.
- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը (նշված է մասնակցի հայերեն անվանումը և կազմակերպաիրավական տեսակը),
- դիմում-հայտարարության «ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը» դաշտում նշված չէ ղեկավարի պաշտոնը,
- դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը հաստատվում են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրում նշված՝ լիազորված անձի նույնականացման քարտի վավերականության ժամկետը լրացած է:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **հունվարի 15-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Հարգանքով՝

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788